

քաղցրաւենիք սահմանուած էին հայ ազնուականին կոչնոց փառքն աւելցնելու, եւ ցարդ յիշուած ուտելեաց եւ ըմպելեաց հետ կազմելու ճշմարիտ ղուկուղեան ճաշ մը, որոյ մէջ կը ցուանայ մեր նախնեաց ճաշակի բարձր նրբութիւնն որկորի արուեստին մէջ: Ի զուր չէր ըսեր Մանդակունին՝ թէ «ի բազմաց քրտանց յօրինին սեղանք» մեծատանց (74), եւ արդարապէս կը կոչուին ժամանակակիցներէն՝ շռայտոչիւնք (անդ) կամ շռայրոչիւն (Յճխ. 97): Չէ կարելի անյիշատակ թողուլ կարուց Գագիկ թագաւորին տուած մէկ ճաշն Ալփասլանայ բանակին, որ կ'ըսուէր թէ «հարիւր հազար դահեկան» արժեք է (Ուռ. 181), շատ մեծ գումար ժամանակին համար: Ո՛չ, մեր ազատանին ոչ մէկ դարու մէջ պիտի կարենայ ըսել Տերտուղիանոսի հետ. «Մեծարեցէք վայելչութիւնը մեր ընթրեաց՝ որ կրօնից գործեր են...: Այնչափ կ'ուտենք՝ որչափ պէտք է կշտանալու. եւ կ'ըմպենք՝ որչափ բաւական է պարկեշտ մարդոց» (Կարբ. Ա, 802-3): Հայուն «կրօնքը» սեղանի վրայ՝ նախաքրիստոնէականն էր. եւ իւր ընթրեաց յղիութեան մէջ կը գերազանցէր քան զհեթանոս Յոյնը, եւ կը մըրցէր հոովմէական կայսերութեան սանձարձակ զեղխութեանց